ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻՆ

Դուն որ հիմա կը մընաս յաւերժական ու կայտին,
Դո՛ւն էիր որ դրիր կրա՛կն՝ Հայ Խորհուրդի՛ն ու կեանքի՛ն,
Դէմն աչքերուս, Օշական: Ըսիր թէ կեանքն անցաւո՛ր,
Փառքերն կ'ինկա՛ն, կ'անցնեսի՛ն, ԳԻՐՆ է յաւերժ, չի ճանչնար

Ոչ մահ, երկիւղ, հալածանք ու կամ սխալ հասկցուիլն:
Զէ՞ ճակտի գիրն բոլորին, խորհողներո՛ւն էն առաջ ...:
Բայց ԳԻՐՔՆ է որ կը մնայ, կը քանդակուի՛ սրտերուս
Եթէ սրտէ՛ն է ծաղկած ...: Դուն էիր որ դասումիդ

Մտակովը անինայ մտրակեցի՛ր ճամբաւներ,
Ըսիր դուն թէ՝ «թառամած հոգիներն ու ծռմրուած
Միտքերն բոլոր՝ մակաբո՛յծ» թէ՝ «սուրբ գործ է խարանել
Զանոնք, գանէն իջեցնել», եւ գոհացումը գտար

Քու իսկ ստեղծո՛ղ ոգիէն որ Հոգի՛ն էր Հայութեան:
Մի՛ cs ԻՐԱԻԼն ճամբայէն ... Անիրա՛ւն էր որ զարկաւ
Սրտիդ մամուռ որ կու տար հոգի՛, հողի՛ն հայրենի,
Ժողովուրդի՛դ՝ որ տեսաւ սարէ ի սար կռուողներ,

Արի՛ւն թափող մարտիկներ, եղեռնի տա՛մը ցեղին:
Զհասկըցա՛ն քեզ մարդիկ, քե՛զ ալ տարին, հանեցին
Կառափնատի կատարին՝ ուր քու սի՛րտը պայթեցաւ
Ու դուն ինկա՛ր, Օշակա՛ն, ցեղին ցա՛ւը քու սրտին:

Դուն որ հիմա կը մնաս յաւերժական ու կայտին,
Սորվեցուցի՛ր որ ես գա՛մ ճակատագրի՛ հետքերէդ ...:

1980, Ալեքսանդրիա ԱՇՏԻՇԱՏ

digitised by A.R.A.R.@